

Հավելված
ՀՀ վարչապետի N 757 - Ա որոշման

Ց Ա Ն Կ

«ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
2022 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 9-Ի N ՀՕ-35-Ն ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ԿԻՐԱՐԿՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

NN	Միջոցառման անվանումը	Իրավական ակտի նախագիծը ներկայացնելու ժամկետը	Իրավական ակտի ընդունման առնչությամբ իրականացվող միջոցառումների ֆինանսական ապահովման աղբյուրը	Իրավական ակտի նախագծի ներկայացման կամ ընդունման համար պատասխանատու պետական կառավարման համակարգի մարմնի անվանումը	Իրավական ակտի ընդունման իրավական հիմքը
1.	«Հանրակրթական ուսումնական հաստատության այլընտրանքային (հեղինակային, փորձարարական և միջազգային) կրթական	2023 թ. հունվարի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	«Հանրակրթության մասին» օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 3.1-ին կետ

	ծրագրերի փորձաքննության անցկացման, ճանաչման և հաստատման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ				
2.	«Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի թափուր տեղի մրցույթի հայտարարման, անցկացման, մասնագիտական հանձնաժողովի ձևավորման, գործունեության և տնօրենի նշանակման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ	2022 թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	«Հանրակրթության մասին» օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետ
3.	«Լիազորված մարմնի՝ պետական հանրակրթական ուսումնական հաստատությունում վարչատնտեսական գործընթացի կառավարումը	2022 թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	«Հանրակրթության մասին» օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 6.1-ին կետ

	իրավաբանական անձին պատվիրակելու կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ				
4.	«Տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի տնօրենի ընտրության (նշանակման) կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ	2023 թ. հունվարի 2-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	«Հանրակրթության մասին» օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 6.2-րդ կետ
5.	«Հանրակրթական ուսումնական հաստատության և տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի մանկավարժական և վարչատնտեսական աշխատողների պաշտոնների անվանացանկը, դրանց նկարագիրը սահմանելու	2022 թ. օգոստոսի 1-ին տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	«Հանրակրթության մասին» օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետ

	մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ				
6.	«Հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ	2023 թ. հունվարի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	«Հանրակրթության մասին» օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 12.1-ին կետ
7.	«Ուսուցչի տարակարգի շնորհման հանրապետական հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ	2022 թ. օգոստոսի 1-ին տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	«Հանրակրթության մասին» օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 12.2-րդ կետ
8.	«Տարակարգ ստացած ուսուցիչների հավելավճար տրամադրելու կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման	2022 թ. օգոստոսի 2-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	«Հանրակրթության մասին» օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետ

	նախագծի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ				
9.	«Հանրակրթական ուսումնական հաստատությունների՝ պետական բյուջեի միջոցներից ֆինանսավորման կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 24-ի N 1262-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ	2022 թ. օգոստոսի 1-ին տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	«Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետ և 35-րդ հոդվածի 3.1-ին մաս
10.	«Պետական ավարտական քննությունների ժամանակացույցը և աշխատակարգը սահմանելու մասին» ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հրամանի ընդունում	2022 թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	«Հանրակրթության մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետ

11.	«Ուսումնական հաստատությունների կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի անդամների և մանկավարժական աշխատողների բարեվարքության կանոնները (վարքականոնը) սահմանելու մասին» ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հրամանի ընդունում	2023 թ. փետրվարի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	«Հանրակրթության մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 26.6-րդ կետ
12.	«Պետական հանրակրթական ուսումնական հաստատության զարգացման ծրագրի մշակման ձևաչափը և զարգացման ծրագրի կատարման ամենամյա հաշվետվության կատարողական ցուցանիշներն ու պահանջները հաստատելու մասին» ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և	2022 թ. օգոստոսի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	«Հանրակրթության մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 26.8-րդ կետ

	սպորտի նախարարի հրամանի ընդունում				
13.	«Հայաստանի Հանրապետության հանրակրթական ծրագրեր իրականացնող հաստատություններում դասագրքերը և ուսումնական այլ նյութերը գործածության երաշխավորելու կարգը հաստատելու մասին» ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հրամանի ընդունում	2023 թ. փետրվարի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	«Հանրակրթության մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 26.15-րդ կետ
14.	«Ուսուցչի մասնագիտական չափանիշները սահմանելու մասին» ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հրամանի ընդունում	2022 թ. օգոստոսի 1-ին տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	«Հանրակրթության մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 26.16-րդ կետ
15.	«Պետական հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորողների գնահատման չափանիշները սահմանելու	2023 թ. փետրվարի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	«Հանրակրթության մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 26.17-րդ կետ

	մասին» ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հրամանի ընդունում				
16.	«Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ատեստավորման կարգը սահմանելու մասին» ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հրամանի ընդունում	2023 թ. փետրվարի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	«Հանրակրթության մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 26.18-րդ կետ
17.	«Հանրակրթական ուսումնական հաստատության դպրոցական և անհատական բաղադրիչով սահմանված առարկաների ծրագրերի և խմբակների երաշխավորման կարգը սահմանելու մասին» ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հրամանի ընդունում	2023 թ. փետրվարի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	«Հանրակրթության մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 26.19-րդ կետ

18.	«Ատեստավորման ենթակա ուսուցչի կողմից հավաքվող անհրաժեշտ կրեդիտների անվանացանկը, չափանիշները և նվազագույն չափաքանակը սահմանելու մասին» ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հրամանի ընդունում	2023 թ. փետրվարի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	«Հանրակրթության մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 26.20-րդ կետ
19.	«Սովորողների տնային ուսուցման կարգը սահմանելու մասին» ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հրամանի ընդունում	2022 թ. օգոստոսի 2-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	«Հանրակրթության մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 26.21-րդ կետ
20.	«Ատեստավորման ենթակա ուսուցչին վերապատրաստող երաշխավորված կազմակերպությունների և դասընթացների ցանկի ձևավորման կարգը սահմանելու մասին» ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հրամանի ընդունում	2022թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	«Հանրակրթության մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 26.22-րդ կետ

	սպորտի նախարարի հրամանի ընդունում				
21.	«Հանրակրթական ուսումնական հաստատությունների՝ պետական բյուջեի միջոցներից ֆինանսավորման գործակիցներն ու նորմատիվները հաստատելու մասին» ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հրամանի ընդունում	2022 թ. օգոստոսի 1-ին տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	«Հանրակրթության մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 26.12-րդ կետ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ